

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչությունը Ուղեցույց գործատուների համար

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչությունը (Հանրային առողջապահություն) խնդրում է ձեր աջակցությունը՝ նախապատրաստվելու և օգնելու կանխել նոր կորոնավիրուսի տարածումը Լոս Անջելես շրջանում: Ամբողջ աշխարհում շարունակում է աճել այս վիրուսով վարակված մարդկանց թիվը՝ առաջացնելով «կորոնավիրուս հիվանդություն 2019» (կրճատ՝ COVID-19) Չինաստանում և այլուր: Ըստ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների և Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ ներկայիս համաշխարհային միտումները վկայում են, որ վիրուսի տարածումն աշխարհով մեկ կարող է շարունակվել ու դառնալ պանդեմիկ: Մենք պետք է պատրաստ լինենք կանխելու այս վիրուսի տարածումը տեղական մակարդակում:

Հանրային առողջապահության վարչությունը ակտիվ քայլեր է ձեռնարկում՝ կանխելու այս վարակի տարածումը: Մենք խստորեն հորդորում ենք, որ բոլոր կազմակերպությունները վերանայեն և թարմացնեն իրենց շտապ օգնության ծրագրերը և և քննարկեն հիմնական ծրագրերը շարունակելու եղանակները, եթե տեղում կատարվող գործողությունները ժամանակավորապես կրճատվեն:

Ավելի վաղ այս ամիս մենք Ձեզ տրամադրել էինք [«Նոր կորոնավիրուսի ուղեցույց գործատուների համար»](#), որը ներառում էր մի շարք անհատական և կազմակերպչական կանխարգելիչ միջոցներ՝ նվազեցնելու համար նոր կորոնավիրուսի տարածումը: Տեղական համայնքում COVID-19-ի զգալի տարածման դեպքում ի լրումն այդ միջոցների շեշտադրման՝ հնարավոր է, որ Հանրային առողջապահության վարչությունը ստիպված լինի կիրառել ավելի կտրուկ գործողություններ, օրինակ՝ միջոցառումների չեղարկում կամ բիզնեսների փակում՝ օգնելու դանդաղեցնել վարակի տարածումը: Մենք խնդրում ենք գործատուներին սկսել պատրաստվել, եթե այսպիսի գործողությունների անհրաժեշտություն լինի: Այս նամակը ամփոփ ներկայացնում է մեր ընթացիկ առաջարկները՝ օգնելու կանխարգելել նոր կորոնավիրուսի տարածումը: Բացի այդ, խորհուրդ ենք տալիս այցելել Հանրային առողջապահության վարչության կայք-էջ՝ ծանոթանալու աղբյուրներին, ինչպիսիք են Բիզնեսի և գործատուների ուղեցույցը, Հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ) և Ինֆորմաֆիկան՝ <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>:

Ընդհանուր տեղեկություններ

Ի՞նչ կանխարգելիչ միջոցներ պետք է ձեռնարկվեն կազմակերպչական մակարդակով՝ շնչառական վիրուսների, օրինակ՝ COVID-19-ի վիրուսի տարածումը նվազեցնելու համար:

Տեղեկացրեք շեշտեք վիրուսի կանխարգելման քայլերի ձեռնարկման կարևորությունը (տե՛ս ստորև):

- Քաջալերեք և աջակցեք աշխատակիցներին և կամավորներին հիվանդ ժամանակ մնալ տանը: Հիշեցրեք նրանց մնալ տանը և աշխատանքի չգնալ, առանց ջերմիջեցնող դեղորայքի ընդունման ջերմությունից ազատվելուց հետո մինչև 24 ժ:
- Տրամադրեք հիգիենայի բավարար պարագաներ, ներառյալ՝ ձեռքերի լվացման մաքուր և գործող կայաններ, օճառ, թղթե անձեռոցիկներ և ձեռքերի լվացման սպիրտային հիմքով միջոցներ:
- Խրախուսեք ձեռքերի կանոնավոր լվացումը, ներառյալ՝ սնվելուց առաջ, պետքարանից օգտվելուց, ինչպես նաև հազալուց և փռշտալուց հետո:
- Հնարավորության դեպքում նվազագույնի հասցրեք սերտ շփումը և առարկաների համատեղ օգտագործումը, ներառյալ՝ սննդի և խմիչքի:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչությունը Ուղեցույց գործատուների համար

- Կանոնավոր կերպով մաքրեք և ախտահանեք այն մակերեսներն ու առարկաները, որոնց հաճախակի դիպչում եք, օրինակ՝ դռների բռնակները, բազրիքները, աշխատանքային սեղանները, ծորակների բռնակները և հեռախոսները: Օգտագործեք սովորական մաքրող միջոցներ և հետևեք պիտակի ցուցումներին:
- Աշխատակիցներին տրամադրեք տեղեկատվություն նոր կորոնավիրուսի ու այն քայլերի մասին, որ պետք է անեն իրենց և իրենց ընտանիքներին պաշտպանելու համար:

Ամենօրյա անձնական կանխարգելիչ գործողություններ՝

- Հիվանդ ժամանակ մնացեք տանը: Մնացեք տանը առնվազն 24 ժամ այն բանից հետո, երբ այլևս չունեք ջերմություն կամ ջերմության ախտանիշներ՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման:
- Հաճախակի լվացեք ձեռքերը ջրով ու օճառով առնվազն 20 վայրկյան: Եթե ձեռքի տակ չկա օճառ և ջուր, օգտագործեք առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի լվացման միջոց:
- Հազալիս և փռշտալիս ծածկեք բերանը անձեռոցիկով, ապա դեն նետեք անձեռոցիկը և անմիջապես մաքրեք ձեռքերը: Եթե չունեք անձեռոցիկ, օգտագործեք հագուստի թևքը (ոչ թե ձեռքերը):
- Սահմանափակեք հիվանդ մարդկանց հետ սերտ շփումը:
- Մաքրեք և ախտահանեք այն առարկաներն ու մակերեսները, որոնց հաճախակի դիպչում եք, օգտագործելով սովորական կենցաղային մաքրող միջոց կամ անձեռոցիկներ:

Ի՞նչ պետք է պատրաստվի անել մեր բիզնեսը, եթե առաջանա COVID-19-ի տարածման բարձր վտանգ:

COVID-19-ի համայնքային տարածման վտանգի ավելացումը կնշանակի հանրությանը սպառնացող աճող վտանգի առկայություն և լրացուցիչ նախազգուշական միջոցների անհրաժեշտություն՝ կանխելու տեղական համայնքում վարակման վտանգը: Կազմակերպությունները պետք է ծրագիր ունենան և պատրաստ լինեն իրականացնել այս լրացուցիչ գործողությունները, եթե այդպիսի առաջարկ լինի Հանրային առողջապահության վարչության կողմից:

- Ունեցեք ծրագիր՝ ձեր անձնակազմի և կամավորների հետ շփվելու համար: Այցելեք մեր կայք՝ publichealth.lacounty.gov և ստացեք ճշգրիտ և թարմացված տեղեկատվություն, որը կարող եք օգտագործել հաղորդակցվելու համար:
- Թույլ տվեք աշխատակիցներին մնալ տանը, եթե նրանց տանը կա հիվանդ մարդ, կամ ընդհատվել է դպրոցների աշխատանքը:
- Մի պահանջեք բուժաշխատողի տեղեկանք սուր շնչառական հիվանդություններով հիվանդ աշխատակիցների կամ կամավորների համար՝ հիվանդությունը հաստատելու կամ աշխատանքի վերադառնալու համար: Առողջապահական ծառայություններ մատուցող գրասենյակները և բուժհաստատությունները չափազանց զբաղված կլինեն և ի վիճակի չեն լինի ճիշտ ժամանակին այդպիսի փաստաթղթեր տրամադրել:
- Մտածեք, թե ինչպես պաշտպանեք այն աշխատակիցներին, որոնք վնասակար բարդությունների ավելի բարձր վտանգի տակ են: Դա կարող է ներառել այնպիսի ռազմավարություններ, ինչպիսիք են հեռահաղորդակցումը կամ աստիճանական հերթափոխներ՝ մեծացնելու աշխատակիցների, վերապատրաստող անձակազմի միջև ֆիզիկական հեռավորությունը, ինչպես նաև ոչ կարևոր աշխատանքային գործուղումների, մեծ դեմառդեմ հանդիպումների և միջոցառումների չեղարկումը:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչությունը Ուղեցույց գործատուների համար

- Բիզնեսները գուցե ստիպված լինեն քննարկել գործողությունների կասեցումը, եթե զգալի թվով անդամներ սերտ շփում են ունեցել նոր կորոնավիրուսով վարակված անձի հետ:
- Անհրաժեշտության դեպքում այդպիսի անձինք (սերտ շփում ունեցած անձինք) կարանտինի մեջ կապահվեն վերջին ազդեցությունից հետո 14 օր շարունակ: Մեծաթիվ բիզնեսի լայնածավալ փակման կոչ կլինի, եթե առկա լինի համայնքում վիրուսի զգալի տարածում, որը հնարավոր չի լինի վերահսկել այլ ռազմավարությունների միջոցով:
- Փոփոխեք, հետաձգեք կամ չեղարկեք համայնքային մեծ միջոցառումները, որտեղ մարդիկ տևական ժամանակ սերտ շփում են ունենում այլ մարդկանց հետ: Հնարավոր է՝ անհրաժեշտություն լինի չեղարկել կամ փոփոխել այսպիսի միջոցառումները, եթե որևէ համայնքում կամ մի քանի տարբեր համայնքներում գրանցվի վարակի զգալի տարածում: Մենք աշխատելու ենք բիզնեսների հետ՝ վտանգը գնահատելու և այն մեղմացնելու արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար: Եթե Շրջանում զգալի դեպքերի կտրուկ աճ, մենք կարող ենք կոչ անել չեղարկել տարբեր տեսակի հանրային միջոցառումները:
- Տարբեր եղանակներով, օրինակ՝ հեռավար աշխատանքի և անձնակազմի վերապատրաստման ճկուն գրաֆիկների միջոցով ապահովեք ծառայությունների շարունակականությունը, եթե տեղում կատարվող գործողությունները ժամանակավորապես կրճատվեն:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների «Ժամանակավոր ուղեցույցը բիզնեսների և գործատուների համար՝ պլանավորելու և հակազդելու կորոնավիրուս հիվանդություն 2019-ին (COVID-19), փետրվար, 2020թ.»-ը ուրվագծում է հակազդման ծրագրի կարևոր նկատառումները, ինչպես նաև մանրամասն ուղեցույց է գործնական ռազմավարություններ մշակելու ժամանակ:

Իմացեք՝ որտեղ ստանալ հավաստի տեղեկություն

Զգուշացեք նոր կորոնավիրուսի շուրջ ծավալվող խարդախություններից, կեղծ լուրերից և խաբեություններից: Հանրային առողջապահության վարչությունը մշտապես մամուլի ասուլիսների, սոցիալական մեդիաների և մեր կայքի միջոցով կտարածի հավաստի տեղեկատվություն, ներառյալ՝ Լոս Անջելես շրջանում նոր դեպքերի մասին հայտարարություններ: Կայքը պարունակում է COVID-19-ի մասին ավելի շատ տեղեկատվություն, ներառյալ՝ Հաճախակի տրվող հարցեր (ՀԾՀ), ինֆոգրաֆիկա և սթեյսի հաղթահարման ուղեցույց, ինչպես նաև ձեռքերի լվացման հետ կապված խորհուրդներ:

- Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության վարչություն (ԼԱՇՀԱՎ, Շրջան)
 - <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/>
 - Սոցիալական մեդիա՝ @lapublichealth
- Լոս Անջելես շրջանի Հոգեկան առողջության հասանելիության կենտրոն՝ 24/7 ռեժիմով աշխատող օգնության գիծ՝ (800) 854-7771

Նոր կորոնավիրուսի մասին տեղեկատվության այլ հավաստի աղբյուրներ են՝

- Հանրային առողջապահության Կալիֆոռնիայի վարչություն (ՀԱԿՎ, Նահանգ)
 - <https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/nCOV2019.aspx>
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (ՀՎԿԿ, Ազգային)
 - <http://www.cdc.gov/coronavirus/novel-coronavirus-2019.html>
- Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ, Միջազգային)
 - <https://www.who.int/health-topics/coronavirus>

Եթե ունեք հարցեր և ուզում եք խոսել ինչ-որ անձի հետ, ապա կարող եք զանգահարել 2-1-1 Լոս Անջելես համայնքի տեղեկատվության գծով, որը մատչելի է 24 ժամ:

Los Angeles County Department of Public Health

www.publichealth.lacounty.gov

Updated: March 3, 2020

